

ՍԱՂՄՈՍ 101

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Սաղմոսերգուն շիտակություն է դավանում	Հավատարմության խոստում ՏԻՐՈՋԸ	Թագավորի խնդրանքը արդարությանը թագավորելու համար	Թագավորի խոստումը	Կատարյալ Իշխանը
<u>MT ներածություն</u> Դավթի Սաղմոսը				
101:1-5	101:1	101:1-2բ	101:1-2բ	101:1-2բ
	101:2	101:2գ-3դ	101:2գ-5	101:2գ-3բ
	101:3-4	101:3գ-4		101:3գ-4
	101:5	101:5		101:5
101:6-8	101:6-8	101:6	101:6	101:6
		101:7	101:7-8	101:7
		101:8		101:8

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Առաջին պարբերությունը սկսում է երեք ԸՂՁԱԿԱՆՆԵՐՈՎ (Սաղմ. 101:1-2, այսինքն՝ ՀԿ-ի *Վերլուծական Ուղեցույց*, էջ՝ 451):

1. ես երգելու եմ – BDB 1010, KB 1479, *Qal*
2. ես փառաբանություն եմ երգելու – BDB 274, KB 372, *Piel*
3. ես ականջ եմ դնելու – BDB 968, KB 1328, *Hiphil*

NASB շարունակում է պարբերությունը մինչև Սաղմ. 101:5: Կան ևս մի քանի «անելու եմ» հայտարարություններ, որոնք գործում են որպես ԸՂՁԱԿԱՆՆԵՐ:

- ա. քայլելու եմ . . . , Սաղմ. 101:2 – BDB 229, KB 246

- բ. դնելու են . . . , Սաղմ. 101:3 – BDB 1011, KB 1483, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ
- գ. ասելու են . . . , Սաղմ. 101:3 – BDB 971, KB 1338, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (սակայն ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ շարքում)
- դ. ես ճանաչելու են . . . , Սաղմ. 101:4 – BDB 393, KB 390, *Qal* ԱՆԿԱՏԱՐ
- ե. բնաջնջելու են . . . , Սաղմ. 101:5 – BDB 856, KB 1035, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ
- զ. հանդուրժելու են . . . , Սաղմ. 101:5 – BDB 407, KB 410, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Պարզապես հռչակումներ, որոնք այլ աստվածաբաններ դիտարկում են որպես անցյալի գործողություններին վերաբերող ԲԱՅԵՐ (AB, հատոր 17A, էջ՝ 4): Ես կարծում եմ, որ առաջին ԲԱՅԵՐԸ վերաբերում են ՅԱՀՎԵԻ գալստյան ժամանակ սաղմոսերգուի անելիքներին (Սաղմ. 100:2բ), քանի որ աստվածահանո հնազանդություն է ցուցաբերել Աստծո ուխտին: Հիշե՛ք, որ երբայերենում ԲԱՅԵՐՆ ինքնին ժամանակ ցույց չեն տալիս: Միայն համատեքստը կարող է որոշել (կամ առաջարկել) ժամանակը:

Բ. Այս պարբերությունը (Սաղմ. 101:1-5) գործում է որպես ՅԱՀՎԵԻ և Նրա հայտնության հանդեպ սաղմոսերգուի հավատքի և հավատարմության հաստատություն:

1. նա երգում է ՅԱՀՎԵԻ բարեգթության մասին (այսինքն՝ *hesed*, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ [hesed]. Սաղմոս 101:2-5-ի շնորհիվ այս առաջին երկուսը հնարավոր է սաղմոսերգուի հավատարմության և ազնվության մասին հռչակում են: Այս երկու ԳՈՅԱԿԱՆՆԵՐԸ հաճախ նկարագրում են ՅԱՀՎԵԻՆ: Թագավորը պետք է արտացոլի ՅԱՀՎԵԻ բնավորությունը):
2. նա երգում է ՅԱՀՎԵԻ արդարության մասին (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐ, ԴԱՏԱՍԱՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ):
3. նա անարատության /կատարելության/ ճանապարհով է ապրում՝
 - ա. «անարատության» համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՆՍԽԱԼԱԿԱՆ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ
 - բ. ճանապարհ բառի համար տես 2 Օրինաց 8:6 և 10:20, և Սաղմ. 1:1 առցանց գրառումները. համագոր «արահետ» (BDB 73) տերմինի համար տես Եսայի 2:3-ի առցանց գրառումը. տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏ, ՃԱՆԱՊԱՐՀ
4. նա կատարյալ (BDB 1070) սրտով է քայլում
5. նա ոչ մի չար բան /անարժեք բան/ (BDB 116) իր աչքերի առջև չի դնում
6. նա ատում է նրանց, ովքեր հեռանում են ճշմարտությունից (հազվադեպ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ, որոնք ՀՎ-ում կիրառվում են միայն այստեղ, BDB 962, տես՝ Ովսեա 5:2):
7. նա թույլ չի տալիս, որ նրանց չարիքը (այսինքն՝ #6) դիպչի նրանց
8. նա չգիտի չարություն
9. նա բնաջնջելու է՝ լռեցնելու նրանց, ովքեր ծածուկ բամբասում են
10. նա չի հանդուրժելու նրանց, ովքեր՝
 - ա. աչքերով ամբարտավան են
 - բ. սրտով հպարտ

Գ. Երկրորդ պարբերությունը (հհ. 6-8) շարունակում է Սաղմ. 101:1-5-ի շեշտադրությունը: Այն նկարագրում է սաղմոսերգուի աստվածահանո ապրելակերպը և չարը մերժելը:

1. դրական (Սաղմ. 101:6)
 - ա. նա ճանաչում է երկրի հավատարիմներին
 - բ. նա ցանկանում է, որ նրանք միասին ապրեն
 - գ. նա թույլ է տալիս, որ նրանք, ովքեր կատարելության կյանքով են ապրում (Սաղմ. 101:6բ) ծառայեն իր հետ
2. բացասական (Սաղմ. 101:7-8)
 - ա. նա թույլ չի տա, որ նենգություն գործողները իր հետ բնակվեն
 - բ. նա թույլ չի տա, որ սուտ խոսողը իրեն ծառայի

գ. նա շարունակ կործանելու է երկրի բոլոր ամբարիշտներին
դ. նա վերացնելու է նրանց, ովքեր ենթադրում են, որ սաղմոսերգուն «թագավոր» է

Դ. Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես են նկարագրվում հավատարիմներին հակառակ մարդիկ՝

1. կռապաշտներ, Սաղմ. 101:3ա
2. հավատուրացներ, Սաղմ. 101:3բ
3. ծուռ սիրտ ունեցողներ, Սաղմ. 101:4ա
4. ծածուկ բամբաստողներ, Սաղմ. 101:5ա
5. ամբարտավան հայացքով մարդիկ, Սաղմ. 101:5բ
6. հպարտ սիրտ ունեցողներ, Սաղմ. 101:5բ
7. նենգություն գործողներ, Սաղմ. 101:7ա
8. ստություն խոսողներ, Սաղմ. 101:7բ
9. ամբարիշտներ, Սաղմ. 101:8ա
10. անօրենություն գործողներ, Սաղմ. 101:8բ

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 101:1-5

¹Ողորմության ու արդարադատության մասին եմ երգելու.

Քե՛զ, ո՛վ ՏԵՐ, սաղմոս եմ երգելու:

²Իմաստությամբ եմ ընթանալու կատարելության ճանապարհով:

Օ՛, ե՛րբ ես Դու գալու ինձ մոտ:

Իմ տան մեջ կատարյալ սրտով եմ քայլելու:

³Աչքերիս առջև ոչ մի չար բան չեմ դնելու,
Ատում եմ ճշմարտությունից հեռացածների գործը,

Այն ինձ չի դիպչելու:

⁴Ծուռ սիրտը թող հեռանա ինձնից.

Չար անձին չեմ ճանաչելու:

⁵Նրան, ով ծածուկ բամբասում է իր ընկերոջ դեմ, ջնջելու եմ.

Նրան, ով աչքերով ամբարտավան է ու սրտով հպարտ, չեմ հանդուրժելու:

101:1 «Ողորմություն ու արդարադատություն» Ողորմության համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԳԹԱՍՐՏՈՒԹՅՈՒՆ (hesed)

«Արդարադատություն» տերմինի համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԱՏԱՎՈՐ, ԴԱՏԱՍԱՆ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ:

❖ «Ո՛վ ՏԵՐ» Սա Իսրայելի ուխտի Աստծո անունն է (ՅԱՀՎԵ):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

101:2 «կատարելություն» «Կատարելության ճանապարհ» խոսքը ակնարկվում է Սաղմ. 139:23-24:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆՄԵՂ, ԱՆԱՐԱՏ, ԱՌԱՆՑ ՆԱԽԱՏԻՆՔԻ

❖ «ե՛րբ ես Դու գալու ինձ մոտ» Այս արտահայտությունը թարգմանվում է «Ե՛րբ եմ ես հասնելու դրան» JPSOA տարբերակի կողմից: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 373) սատարում է MT տարբերակին “B” գնահատականով (որոշ չափով կասկածելի):

Այն արտացոլում է ՀԿ-ը՝ Մովսիսական գործերի վրա հիմնված ուխտը: Հանախ այն կոչվում է «երկու ճանապարհներ» (Սաղմոս 1, 2 Օրինաց 30:1,15-20, Երեմ. 17:5-8): Այն «Իմաստասիրական գրականության» մի կատեգորիա է, որը նկարագրվում է՝

1. երանելի է (տես՝ Սաղմ. 1:1, Մատթևոս 7)
2. անիծյալ է (տես՝ 2 Օրինաց 27-28)
3. կյանքը բույսի պես կա՛մ պտղաբեր է, կամ էլ թառամող

Բարգավաճումը դիտարկվում էր որպես Աստուծուց անմիջական պարզև ուխտի հնազանդության համար (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 28), իսկ խնդիրները մեղքի անմիջական հետևանքն էին (տես՝ Հոբ, Սաղմոս 73): ՀԿ-յան նման աստվածաբանական տեսակետը պետք է սրբագրվեր ՆԿ-ի հայտնությամբ: Աստված մեզ հետ է և մեր կողմից՝ Իր էության հիման վրա: Հիսուսը գալիս է բոլորի համար և ոչ թե մի քանի հոգու: ՀԿ-ը կենտրոնանում է աղքատի, օտարականի, և սոցիալապես անզորների վրա, որպես բոլորի՝ և ոչ թե միայն արտաքուստ օրհնվածների հանդեպ Իր սիրո արտահայտման աստվածաբանական կերպ: Նա եկավ Քրիստոսի մեջ: Նրա սերը կարող ենք ընդունել ապաշխարությամբ, հավատքով, հնազանդությամբ, ծառայությամբ, և համբերատարությամբ:

❖ **«իմ տան մեջ»** Այս արտահայտությունը երկիմաստ է: Այն կարող է վերաբերել՝

1. ազգերին (տես՝ Սաղմ. 101:7, այսինքն՝ սաղմոսերգուն որպես թագավոր)
2. ընտանեկան միջավայրին
3. հասարակությանը

Սաղմոսերգուն հաստատում է կա՛մ իր ներկայիս կա՛մ էլ անցյալի հնազանդությունը ՅԱՀՎԵԻ ուխտին, որը տրված էր Մովսեսի միջոցով: Սաղմոս 101:3-ում նկարագրված են մարդիկ, ովքեր գիտակցաբար և պարբերաբար խախտում էին ուխտը (ԱՆԿԱՏԱՐ):

«Տուն» բառը՝ BDB 108, կիրառվում է թագավորի պալատի համար 3 Թագ. 4:6, 16:9, Եսայի 22:15-ում: Սա կարող էր սատարել այն տեսակետը, որ հեղինակը թագավորն է, դրանով իսկ այս Սաղմոսը կվերածվի ևս մեկ արքայական Սաղմոսի:

101:3 Այս համարը նկարագրում է հավատուրացություն: Այս տերմինը, որը թարգմանվել է որպես «հեռացած» (BDB 962, KB 750) հանդիպում է միայն այստեղ և Ովսեա 5:2: KB առաջարկում է «խոտորել» կամ «օրինազանցություն» (LXX): Սա խրթին հասկացություն է, սակայն Մուրբ Գրքում պարբերաբար կրկնվող: Իսրայելի պատմության ընթացքում հիմնականում ժողովրդի միայն մի մասն էր հավատարիմ հետևորդ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ (aphistēmi)

❖ **«սիրտ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍԻՐՏ

❖ **«չար բան/անարժեք բան»** Այս ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 116) այն արմատն է, որից հետագայում Սատանա համար *Բելիադ* անունը ստեղծվեց: Հիմնական նշանակությունն է՝ «անարժեք», «ոչ մի բանի պիտանի», «ցածր՝ ստոր»: Այս համատեքստում հնարավոր է, որ այն վերաբերում է կռապաշտությանը (AB, հատոր՝ 17A, էջ՝ 61):

Տե՛ս 2 Օրինաց 13:13-ի գրառումը:

2 Օրինաց 13:13 «անարժեք մարդիկ» Բառացի սա նշանակում է «*Բելիադի* զավակներ» (BDB 116): Երբայերեն բառը նշանակում է «անարժեքներ» կամ «անպիտաններ» (տես՝ Դատ. 19:22, 20:13, 1 Թագ. 10:27, 30:22, 3 Թագ. 21:10,13, Առակ. 6:12): ՆԿ-ի ժամանակներում *Բելիադի* դարձել էր Սատանայի հոմանիշը (տես՝ 2 Կորնթ. 6:15): Մուրբ Գրքում առկա է աստվածաբանական զարգացում, որտեղ չարը դառնում է անձնավորված:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՍԱՏԱՆԱ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԲԵԼԻՎՐ

101:4 «չար» Չար (BDB 948 II) բառը համատոքստում նշանակում է գիտակցաբար ՅԱՀՎԵԻ հայտնված կամքի խախտում: Քանի որ Սաղմ.101:3բ, 5ա, 6-ում անդրադարձ է կատարվում չարագործներին, կարծում եմ սա նույնպես վերաբերում է չար մարդկանց (տես՝ NASB, New Berkerley տարբերակը: Տես 2 Օրինաց 30:15-20-ի առցանց գրառումները)

www.freebiblecommentary.org

101:5 «ջնջելու եմ» ԲԱՅԸ (BDB 856, KB 1035, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ /կարծում եմ կիրառված է ԸՂՁԱԿԱՆ իմաստով/) եբրայերենում նշանակում է «չեղարկել» կամ «հեռացնել», իսկ արաբերենում նշանակում է «րեցնել» (տես՝ NJB): Այս արմատի նշանակությունն ավել է համապատասխանում համատեքստին: Այն ցույց է տալիս, որ ծածուկ ստերը՝ բամբասանքները կռեցվեն (REB):

Մի օր արդարությունը գալու է: Այն եկավ Քրիստոսի մեջ (տես՝ Մատթ. 3:2, 4:17) և մի օր կսփռվի ամբողջ երկրի վրա (տես՝ Մատթ. 6:10, Հովհ. 14:1-3, Հայտ. 11:15):

❖ **«չեմ հանդուրժելու»** MT (BDB 407, KB 410, *Qal* ԱՆԿԱՏԱՐ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ) ԼԿԻ թարգմանվում են LXX-ի կողմից որպես ԼԿՁ (BDB 37): Այս շտկումը չի արդարացվում անգլերեն որևէ կարևոր թարգմանության կողմից, բացառությամբ NEB, սակայն այն չի հետևում REB-ին: «Հանդուրժել» կամ «համբերել» բառերը զուգահեռվում են «ջնջել» կամ «րեցնել» բառերին:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 101:6-8
⁶Իմ աչքերը երկրի հավատարիմների վրա են լինելու, Որպեսզի ինձ հետ բնակվեն:
Կատարելության ճամփով քայլողն է ինձ ծառայություն մատուցելու:
⁷Նենգություն գործողը չի բնակվելու իմ տան մեջ.
Սուտ խոսողը չի հաստատվելու աչքերիս առջև:
⁸Ձափուտյան վաղ կործանելու եմ երկրի բոլոր ամբարիշտներին, Որպեսզի ՏԻՐՈՁ քաղաքից վերացնեմ բոլոր նրանց, Ովքեր անօրենություն են գործում:

101:6 Մի քանի անգլերեն թարգմանություններ Սաղմ.101:5 և 6-ը ներկայացնում են որպես առանձին պարբերություններ (NRSV, NJB): Հավանաբար պատճառը Սաղմ. 101:3-4,5 (և 7) է, որտեղ նկարագրվում է, թե ում թագավորը չի ընդունի, մինչդեռ Սաղմ. 101:6 նկարագրում է նրանց, ում նա կընդունի: Սրանք հավատարիմ հետևորդների տեսակն են, ովքեր նման են հենց թագավորին (տես՝ Սաղմ. 101:1-2):

101:7 «իմ առջև/աչքերիս առջև» Այս ԿԱՁՄՈՒԹՅՈՒՆԸ BDB 617 և BDB 744 կրկնվում է Սաղմ. 101:3ա-ից: Այս արտահայտությունը զուգահեռվում է «իմ տան մեջ» խոսքին, որը մեկ այլ պատճառ է տեսնելու, որ տվյալ Սաղմոսի հեղինակը թագավորն է:

- 101:8** Այս համարը կարծես թե ունի վախճանաբանական կողմնորոշում:
1. ամեն առավոտ (այսինքն՝ պատերազմից վերադառնալը, կամ պարզապես թագավորի դատ վարելու ժամանակը, տես՝ 2 Թագ. 15:2):
 2. երկիրը (ուսնի մի քանի իմաստ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԵՐԿԻՐ, ՀՈՂ, ԵՐԿՐԱԳՈՒՆԴ)
 3. Տիրոջ քաղաքը (տես՝ Հայտնություն 21-22, որտեղ այն դառնում է Աստծո ժողովրդի նկարագրությունը, այսինքն՝ «սուրբ քաղաքը, Նոր Երուսաղեմը»)
 4. վերացնել բոլոր նրանց, ովքեր անօրենություն են գործում (տես՝ Մատթ. 25:31-46, Հայտն. 20:11-15, 21:8,27):

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն գիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք սա արքայական Սաղմոս է: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ:
2. Արդյո՞ք Սաղմ. 101:1 նկարագրում է ՅԱՀՎԵԻՆ, թե թագավորին:
3. Ինչո՞ւ է Սաղմ. 101:2բ այդքան դժվար մեկնաբանելը:
4. Արդյո՞ք Սաղմ. 101:3 նկատի ունի կռապաշտությունը:
5. Արդյո՞ք Սաղմ. 101:8 վախճանաբանական է, թե իրատեսական: